զիս խպառ կորուցանէին, որպէս որ վերո[յ] գրեցի, թէ ասացին ինձ նախարարքն, թէ՝ եթէ վատ անես՝ քեզ վատ գլնի եւ այլ:

— Հինկերորդն, որ առանց հրամանաց Ֆռանցիզ թագաւորին ոչինչ կամեցայ առնել, որպէս որ օրէն էր եւ հարկն պահանջէր, քանզի ես նոցա անուամբն էյի եւ այլ: Գոն բազում պարագայս, այժմ կարես ասել, թէ մեղանչեցիր, ոչ այնքան զգուշութեամբ պահէին զիս, որ եթէ թուչուն ոք մերձենար առ յիս, կարծէք անկանէին եւ սպանանէին այն թռչունն, զի միգուցէ գիր եւ կամ լուր ինչ հասուցանէմ ի յունկն շահին: Այնքան հաստատեալ էյին ի միտս իւրեանց, թէ եմ բարեկամ շահին եւ թշնամի յիւրեանց, վասն այսորիկ թոյլ ետու եւ սկսայ հայիլ ի հեռաստանէ որպէս օտար ոք: Տէ՛ս եխպայր, ասաց Տէրն մեր հրեից, թէ՝ եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն եւ ամենայն տուն նորա աւարի հարկանիցէ[63]: *Արդ զիս կապեցին, ասէին, թէ առիթն ես եմ, զի ոչ կամէյի, թէ ռուսքն գան: Ապա, յո՞ւր է նոցա աւարն եւ նոցա առած տունն: Իմ ժամանակին ինչ որ առել էյին, զկնի մետասան ամաց զայն ես յետ տվին պարսից եւ ի յետս չոքան:*

Հ. Այդ ամենայն պարագայսն, որ ասացիր, է արդար պատճառ, բայց զօրանայիր բանիւ Տեառն, մերժէյիր ի բաց այտ ամենայն պատճառն ի բաց, զբանիւ Տեառն յաղթէյիր բարեաւն /231b/ չարին, գերազանց աստիճանաց արժանի լինէյիր:

Պ. Որովհետեւ իմ ասածն ոչ մտաւ ի յունկն քոյ, հարկաւորեմ լռել, ուստի լար, թէ առանց խնդրանաց, մեծաւորոք բռնութեամբ շնորհեց ինչս ուրուք, կամ ընկեր՝ ցընկերոջն, ոչ, այն Տէրն, որ ասաց, թէ՝, բարի արարէք ատելեաց ձերոց, *նայեւս ասաց, թէ՝* մի արկանէք զմարգարիտս ձեր առաչի խոզանց[64]: *Պիտի ատելին խնդրէ ի յէն, որ դուն հարկաւորիս առնել նմայ բարի, այտ բան Տէրն մեր ինքնին ոչ արար, զի բռնութեամբ տայր արքայութիւնն իւր հրէյիցն, այս հարցմունքն յաւելորդ եղեւ է՛ւ քեզ, է՛ւ ինձ պատասխանելն աշխատեն:*

Հ. Այտ բան առաւել հաւատարմացուցնէ զքեզ, քան զամենայն բան, զայտ արդար ասացէր եւ որ ասացիր, թէ զիս կապեր են, արդ յուր է նոցա աւարն եւ կամ առած տունն եւ ապրանն: Արդ, հարցանեմ քեզ բան մի, որ ոչ մնայ տարակուսութիւն ի մեր զրուցիցն վերայ, զի շնորհես ասել ինձ զճշմարիտն: Գուցէ դուն խորհրդաբար հաստատե՞լ էյիր ընդ շահին զքո բանն եւ ասել, թէ պինտ կաց մինչ որ յինէն հասանէ քեզ լուր ինչ, ապայ թէ՝ այնպէս գործեայ զգործն քոյ, վասն այն յամառեցան ընդդէմ Ռուստաց:

Պ. Այտ յամառումն Պարսից պատճառ եղեն ռուսք ինքեանք, քանզի ի ներքուստ խոստանային բարեկամ Պարսից եկեալ վասն օգնութեան նոցա եւ արտաքուստ գործօվն յիւրեանց յայտնէցին թշնամութիւն, որ խելահար եւ աչացու լինօղն ես յիմանայր, թէ են /232a/ խաբեբայ եւ հաստատ թշնամի, վասն այսորիկ յետս խրտեցան պարսք ի Ռուստաց եւ սկսեցին պատերազմաւ ընդդիմանալ յՌուստաց եւ ասէին Պարսք, թէ՝ եթէ մեր բարեկամ էք, եւ թէ վասն օգնութեան մերո[յ] եկիք այսր, արդ ընդէ՞ր շինէք զբերթորայս եւ ամրանայք ի նոյնն եւ վնասէք եկամտին մեր թագաւորին, յառաջ մատիք, ոչ կոչեցաք զձեզ վասն շինելո[յ] զբերթորայս, այլ միաբանիլ ընդ մեզ եւ պատերազմիլ ընդ թշնամիսն մեր: Մեր թշնամին ահայ Խպահան է, շնորհեցէք յառաջ մատիք: Բայց ոչ անսային, այլ օր աւուր ամրանային եւ հաստատէյին ի վերայ տիրած յերկրին: Արդ, դուն տուր ի քէն յիրաւն, եթէ դուն շինէյիր անդ ի տեղի պարսից թագաւորին, ի՞նչ կառնէյիր անդ, այլ ինչ պիտոյ էր, յաւել ոք, զի ասիցէր շահին, թէ ռուսք ոչ են ձեզ բարեկամ, յաւելին ողորմելի պարսք ասել յՌուստաց, թէ յիւրաքանչիւր զօրականի տամք ամէն ամսէն մին թուման, տուք մեզ երկոտասան այրս, զի ընդ մեր զօրացն երթիցեն Խպահան: Ոչ ետուն եւ ոչ քայլ մի ոտից առին: Արդ օ՞վ է այժմ մեղապարտ: Ոչ առաքեն ռուսք ինքեանք: Այտ քու

63 Հմմտ. Մարկ. Գ 27

64 Մատթ. Է 6